



ԲԱԶՄՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻԻ 18.

1857

ՍԵՊՏԵՄԲԵՐ 15.

ՌԱԺԱՅԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԱՇԱԿԵՐՏԱՑ

ՏԱՐԵԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Ամէն անգամոր կը դառնանք դպրա-
տանց մէջ կատարուած տարեկան հար-
ցաքննութեանց հանդէսներուն վրայ
խօսելու, սովորական նիւթ մը չերե-
նար մեզի համար այն հանդէսը, որ իր
պարզութեանը մէջ ալ գեղեցիկ նորու-
թիւն մը ունի. և ինչպէս աշակերտին
համար քաղցր է տարի մը անցընելը,
և օգտով անցընելը, ասանկ ալ հան-
դիսականաց և ընթերցողաց համար
սիրելի պիտի ըլլայ խրախուսական աչ-
քով մը նայիլ այն աշակերտաց վրայ,
որ իրենց ուսումնական և ըստ ինքեան
դժուարին ընթացքին մէջ յառաջա-
դիմութեան քայլ մը առած, փափաքա-
նօք կը սպասեն իրենց ջանիցը գովեստը
նկատել ոչ միայն իրենց օգտին՝ այլ նաև

այլոց միւսիթարութեանը վրայ : Այս
դիտմամբ մենք ալ տարուէ տարի մտա-
դիւր սիրով կը հրատարակենք այն ըն-
տիր և փութաջան աշակերտաց յառա-
ջադիմութեան վիճակը, որոնց դաս-
տիարակութեան խնամքը մասնաւոր
կերպով մեզի յանձնուած է, և նուի-
րական պարտք մը առած ենք վրանիս՝
բուն և ուղիղ կրթութեամբ ազնուա-
ցընել թէ՛ մեր աշակերտաց ծնողացը՝ և
թէ՛ ամբողջ ազգի մը յոյսերը :

Ինչպէս Սուրատեան վարժարանի
աշակերտք՝ ասանկ ալ Սափայեւեան
վարժարանինները իրենց տարեկան
քննութիւնները լմնցուցին փառօք. և
հանդիսական պարգևաբաշխութիւնը
կատարուեցաւ ամուսն Գին : Ինչ էին

Թուով աշակերտք, վասն զի վարժարա-
նը վեց եօթը ամիս առաջ ուրախ և քա-
ջալերական սրտով իրենց ծնողացը դար-
ձուցեր էր իր աշակերտաց մեծ մասը .
և դաստիարակք՝ իրենց աշխատանայ
այնպիսի կերպով արգասաւոր ըլլալուն
վրայ՝ ուրախանալու սիրտնքն ունեցեր
էին . վասն զի այն ընտիր խումբը՝ իրենց
հայրենիքը դառնալնէն ետքը՝ թէ աս-
տուածապաշտութեամբ և թէ ուսումնա-
կան կրթութեամբ վարժարանիս մէջ-
մէկ պարծանք եղեր էին թէ անոնց
առջև որ իրենց ազնուութեամբը սովու-
րած են ազգային յառաջադիմութեան
գլխաւոր կեդրոններէն սեպել՝ Սիաթա-
նութեանս խնամոցը տակ եղած վար-
ժարանները, և թէ անոնց որ գովելի
անգոհութեամբ՝ շատանալ չեն ուզեր
այն արգասեօքը որ ժամանակաւ կրնան
աւելի շահաւէտ և օգտակար ըլլալ .
Բայ երկու դաս ազգասիրաց համար
ալ մեծ ուրախութիւն եղած տեսանք
նկատելը Ռափայէլեան և Սուրա-
տեան վարժարանաց դարձաւոր աշա-
կերտաց վրայ՝ թէ ծնողք և աշակերտք
իրաւունք ունին վեց եօթը տարուան
զրկում և իրարու կարօտը քաշելը՝ և
անանկով ձեռք ձգել դաստիարակու-
թեան օգուտները :

Տարակոյս չունինք թէ Ռափայէ-
լեան վարժարանիս ներկայ աշակերտքն
ալ, որ իրենց սահմանուած ուսումնա-
կան ընթացքը լմնցընելու համար մէկ
տարի մըն ալ վարժարանիս մէջ պիտի
մնան, նոյն ուրախութիւնը պիտի ըն-
ծայեն թէ իրենց ծնողացը և թէ դաս-
տիարակաց : Բայ տարածամ կար-
ծուած յոյսերնիս անպատճառ չէ .
վասն զի նոյն է վարժարանին ոգի տը-
ւող եռանդը, նոյն աշխատասէր փոյթը,
և աշակերտաց կողմանէ ալ նոյն ջանքն
և ուսումնասիրութիւնը : Բայ ջանքն
և ուսման փոյթը մենք տեսանք ի մօ-
տոյ՝ իրենց քննութեանցը ժամանակ, և
պարգևաբաշխութեան համար հրաւի-
րուած հանդիսականք՝ զարմացան ա-
նոնց յառաջադիմութեանը վրայ նկար-
չութեան, ճարտարապետական զար-

դուց և դրուագագործութեանց մէջ . և
ընթերցողք ալ կրնան տեսնել՝ հետա-
գայ ցուցակին մէջ :

Նոյն յառաջադիմութեան յոյսը ի-
րենց վրայ կու տան նաև նորեկ աշա-
կերտք ալ, որոնք եռամսեայ ժամանա-
կին մէջ ցուցրցած ջանքովնին ալ կ'ի-
մացընեն թէ որչափ օգտակար պիտի
ըլլայ վարժապետաց և դաստիարակաց
խնամքը . և ասոնք են՝ իրենց հասակին
կարգաւ :

Յակոբ Սիւլայրճեան .

Յովսէփ Լճարեան .

Սիւլէյմ Սիւլայրճեան .

Լճարեան Գէսէճեան .

Հիւրմիւզ Հիւրմիւզեան .

Լճարեան Ղերմակեան .

Սանուէլ Փափագեան .

Յովհաննէս Սելչոնեան .

Ռափայէլ Գազէզեան .

Յուսէփ Գէլլեան .

Սիւլայէլ Լճարեան .

Յովսէփ Տէօվլէթեան .

Յովհաննէս Գայրէճեան .

Պօղոս Լճարեան .

Ներսէս Նիւրեղեան .

Սիւլէյմ Լճարեան .

Լճարեան Լաւորճեան .

Գրիգոր Սիւլայէլեան .

Յովհաննէս Նիկողեմոսեան .

Լճարեան Լաւորճեան .

Լճարեան Սեթեան .

Յարութիւն Լճարեան .

Տիգրան Թեմուրեան .

Սիւլայէլ Վէօլէկեան .

